

Ն. Մ. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

ԴԻՖԵՐԵՆՑԻԱԼ ՀՈՂԱՅԻՆ ԹԵՆՏԱՅԻ ԷՌԻԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Սոցիալիզմի կարևորագույն տնտեսական պրոբլեմներից է դիֆերենցիալ հողային ռենտայի պրոբլեմը: Դիֆերենցիալ ռենտան սոցիալիստական գյուղատնտեսության ամբողջական արդյունքի բաղկացուցիչ մասն է, միաժամանակ նրա առանձնահատուկ ձևը: Հայտնի է, որ հասարակական կացութաձևերի փոփոխման ընթացքում հավելյալ արդյունքը չի ոչնչանում, այլ միայն վերափոխվում է այդ արդյունքի սոցիալ-տնտեսական ձևը: Այս առթիվ Մարքսը նկատել է, որ տնտեսական կացութաձևերը միմյանցից տարբերվում են հավելյալ աշխատանքի և հավելյալ արդյունքի գոյության և յուրացման ձևերով:

Կապիտալիստական ագրարային հարաբերությունների ոչնչացումը և սոցիալիստական ագրարային կարգի հաստատումը չի վերացնում գյուղատնտեսության հավելուրդային արդյունքը, շնայած վերափոխում է նրա շուրջ ծավալվող հասարակական հարաբերությունները: Սոցիալիզմի ժամանակ ևս ուժի մեջ է մնում այն փաստը, որ գյուղատնտեսության մեջ օգտագործվող հողերի և հատկապես լավագույն հողերի քանակը սահմանափակ է, և հողերի առանձին ղանգվածների (կտորների) միջև, որքան էլ զարգացած և ինտենսիվ լինի գյուղատնտեսությունը, զգալի տարբերություններ կան նրանց բերրիության, շուկաների նկատմամբ տեղադրվածության, ինչպես նաև հողերի ինտենսիվ օգտագործման աստիճանի տեսակետից:

Բնա-տնտեսական համեմատաբար ավելի բարենպաստ պայմաններում աշխատող տնտեսությունները, հավասար աշխատանքային և նյութական ներդրումների դիմաց մեկ միավոր հողատարածությունից ավելի շատ արդյունք են ատանում, քան վատագույն պայմաններում աշխատողները: Բայց, քանի որ այս վատագույն հողերի օգտագործումը տնտեսական անհրաժեշտություն է, առանց որի հասարակությունը չի կարող բավարարել իր պահանջները գյուղատնտեսական մթերքների գծով, ապա և այդ հողերի վրա կատարած ծախսերը հանրորեն անհրաժեշտ ծախսեր են, դրանք պետք է հատուցվեն և վերջին հաշվով հատուցվում են հասարակության կողմից: Եա նշանակում է, որ վատագույն հողերի վրա կատարած ծախսերը օբյեկտիվորեն որոշում (կարգավորում) են գյուղատնտեսական արդյունքի միավորի արժեքը և գինը: Եայց լավագույն և միջակ հողերից ստացվող արտադրանքը չի կարող վաճառքի հանվել տարբեր գներով՝ այն վաճառվում է սպառողներին միևնույն գներով: Այստեղից էլ ավելի բարենպաստ պայմաններում աշխատող ձեռնարկությունների արտադրանքի իրացման հաշվին այդ ձեռնարկությունները ստանում են որոշակի լրացուցիչ, հավելուրդային եկամուտ կամ արդյունք, որը և դիֆերենցիալ ռենտայի այսպես ասած բնեղեն հիմքն է, կորիզը: Սակայն ընդգծենք, որ գյուղա-

տնտեսության հավելուրդային արդյունքը կամ հկամուտը դեռևս ինքը ռենտա չէ, այլ ռենտա է դառնում որոշակի հասարակական, դասակարգային հարաբերությունների առկայության դեպքում միայն: Մեր երկրում դրանք բանվոր դասակարգի և գյուղացիության հարաբերություններն են:

Հողը մեր երկրում ազգայնացված, համաժողովրդական սեփականություն է: Բայց, միևնույն ժամանակ, նրա մեծ մասը ամրացվել է կոլտնտեսություններին առհավետ օգտագործման համար, այլ կերպ ասած, հողը որպես տնտեսության օբյեկտ անմիջապես պատկանում է կոլտնտեսություններին: Նրանք են հողի մենաշնորհ օգտագործողը: Այդ յուրահատուկ մենաշնորհը էլ ավելի ակնառու է դառնում այն բանի հետևանքով, որ կոլտնտեսային արտադրությունը հիմնված է բոլոր արտադրամիջոցների (բացի հողից) կուլեկտիվ, խմբային սեփականության և տվյալ կուլեկտիվի աշխատանքի վրա, ուստի նրա արդյունքը նույնպես խմբային սեփականություն է, այդ թվում և հավելյալ արդյունքը: Այսպիսով, սոցիալիստական պետության և կոլտնտեսությունների հարաբերությունը դա հողի սեփականատիրոջ և հողի մենաշնորհ օգտագործողի հարաբերություն է՝ գյուղատնտեսության հավելուրդային արդյունքի արտադրության և բաշխման նկատմամբ: Ուրեմն և կոլտնտեսային մենաշնորհ հողօգտագործումը դիֆերենցիալ ռենտայի գոյության անմիջական, գլխավոր պատճառն է սոցիալիզմի պայմաններում:

Ուվետական որոշ տնտեսագետներ, ինչպես գիտենք, ժխտում են դիֆերենցիալ ռենտայի առկայությունը մեր տնտեսակարգում: Մեր տնտեսագիտական մամուլում բավականաչափ հիմնավոր կերպով այդ տեսակետը քննադատվել է, ցույց է տրվել, որ և՛ տեսական և՛ գործնական առումով անհնարին է խուսափել ռենտայի պրոբլեմից: Այնուամենայնիվ, մենք չենք կարող գոնե համառոտակի շանդրադառնալ հիշյալ բանավեճին:

Այսպես, օրինակ, ակադեմիկոս Ս. Ստրումիլինը գրում է, որ հողային ռենտան, ինչպես և միջին շահույթը բնորոշ են միայն կապիտալիստական արտադրանականակին, ընդ որում այս կատեգորիաներից առաջինը կապված է հողի մասնավոր սեփականության, իսկ երկրորդը՝ կապիտալի կատեգորիաների գոյության հետ: «Սոցիալիզմի պայմաններում—գրում է նա,—դասակարգային շահագործման բացակայության հետևանքով, բացառվում են նաև հավելյալ արժեքի բոլոր տարրերը, այդ թվում և հողային ռենտան»¹: Ինչպես տեսնում ենք, խոսքն այստեղ ավելի շուտ սոցիալիզմի և կապիտալիզմի սոցիալ-տնտեսական հարաբերությունների արմատական տարբերությանն է վերաբերվում, որը ոչ ոք չի էլ ժխտում, սակայն ամենևին էլ հիմք չի տալիս ժխտելու հավելյալ արդյունքի, կամ նրա առանձին տարրերի (շահույթի, ռենտայի) գոյությունը սոցիալիզմի պայմաններում:

Հավելյալ արդյունքը, շահույթը արտադրության զարգացման և ընդլայնման օբյեկտիվորեն անհրաժեշտ պայմանն է, ուստի այն չի կարող վերանալ, չբանալ սոցիալիզմի ժամանակ: Իհարկե, մեզանում չի գործում միջին շահույթի կապիտալիստական օրենքը, սակայն շահույթը և հանրորեն անհրաժեշտ շահույթի անհրաժեշտությունը ամենևին էլ չեն վերանում: Սոցիալիստական տնտեսության, այդ թվում հատկապես գյուղատնտեսության պատմությունը և առօրյան մեզ ցայտուն վերապով ցույց են տալիս, թե ինչ անմխիթար հետե-

¹ Տե՛ս «Вопросы экономики», № 7, 1960, стр. 84.

վանքների և հասցնում շահույթի և շահութաբերության կատեգորիաների ան տեսումը: Տնտեսագետների մոտ մի ժամանակ բավականաչափ տարածված այն տեսությունը, թե սոցիալիստական ձեռնարկությունների, այդ թվում և կոլտնտեսությունների նորմալ զարգացումը իբր կապված չէ նրանց շահույթաբերության, շահույթի մակարդակի հետ, այժմ պետք է համարել որպես տրնտեսագիտության անցած փուլ, մի տեսություն, որն ավելի շուտ արդյունք էր կապիտալիզմի և սոցիալիզմի մակերեսային համեմատությանը և մեր տրնտեսական պրակտիկայի որոշակի թերությունների ոչ քննադատական ընկալման, այդ սխալ պրակտիկայի ընդհանրացման: Կյանքը պահանջում է, որ յուրաքանչյուր նորմալ աշխատող ձեռնարկություն, այդ թվում և յուրաքանչյուր կոլտնտեսություն, նորմալ եկամուտ (շահույթ) ստանա, քանի որ շահույթն է կուտակման միակ աղբյուրը: Առանց նորմալ շահույթների իրացման անհնարին և անխմատ կրիսիսի խոսել կոլտնտեսություններում և սովխոզներում կուտակումների և ընդլայնված վերարտադրության ապահովման մասին:

Սոցիալիզմի ժամանակ դիֆերենցիալ ռենտայի գոյությունը ժխտելու համար ակադ. Ստրումիլինը վկայակոչում է իրերի փաստացի վիճակը՝ գնագոյացման ժամանակակից պրակտիկան, գնագոյացում, որի հիմքում մի ժամանակ դրված են եղել գյուղատնտեսական արտադրության միջին ծախսերը:

Ստրումիլինը հետաքրքիր հաշվարկ է կատարում մեր երկրում և ԱՄՆ-ում գյուղատնտեսական սննդամթերքների հավաքածուի շուկայական արժեքի վերաբերյալ: Հաշվարկից երևում է, որ այդ հավաքածուի արժեքը շուկայական գներով մեզ մոտ համեմատաբար ավելի էժան է, չնայած գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականությունն առնվազն 3 անգամ ցածր է, քան ԱՄՆ-ում: Ստրումիլինը դա բացատրում է նրանով, որ մեզ մոտ գյուղատնտեսական մթերքների գները որոշվում են միջին ծախսերի հիման վրա և չեն պարունակում դիֆերենցիալ ռենտա, այդ «կեղծ սոցիալական արժեքը», մինչդեռ ԱՄՆ-ում, ընդհակառակը, այդ գները պարունակում են իրենց մեջ ռենտա, այդ թվում բացարձակ ռենտա:

Սկսենք նրանից, որ ցածր գինը դեռևս ցածր արժեքի նշան չէ: Ճիշտ է, իհարկե, որ մեզ մոտ հողի մասնավոր սեփականության բացակայության պատճառով չկա նաև բացարձակ ռենտան, որը զգալի չափով էժանացնում է գյուղատնտեսական մթերքների արտադրությունը: Ինչ վերաբերվում է դիֆերենցիալ ռենտային, այն չի վերացել: Սակայն այստեղ վճռական հանգամանքն այն է, որ գյուղատնտեսական մթերքների գները մեզանում երկար ժամանակ զգալիորեն ավելի ցածր են եղել նրանց արտադրության հասարակական ծախսերից, այսինքն արժեքից: Իա ապացուցեց Կյանքը՝ Վերջին 10—12 տարիների ընթացքում, այդ թվում և Ստրումիլինի կատարած հաշվարկից հետո (1960—1965 թթ.) մեր երկրում տեղի է ունեցել գյուղատնտեսական մթերքների ինչպես մթերման, այնպես և մանրածախ (շուկայական) գների զգալի բարձրացում: Իա ուղղակիորեն վկայում է այն մասին, որ այդ գները անցյալում չեն համապատասխանել գյուղատնտեսության իրական հասարակական ծախսերին, ցածր են եղել արժեքից: Վստահորեն կարելի է ասել, որ գյուղատնտեսական արտադրանքի այսօրվա իրացման գները շատ ավելի մոտ են արժեքին, քան սրանից 5 կամ 10 տարի առաջ:

Մինչդեռ ակադ. Ստրումիլինը գրում է, որ եթե գյուղատնտեսական արդյունքի գները որոշենք վատագույն պայմաններով, այն դեպքում երբ արդյու-

նաբերության մեջ դրանք որոշվում են միջին ծախսերով, ապա տեղի կունենա քաղաքի և գյուղի միջև ոչ համարժեքային փոխանակություն, քաղաքի աշխատավորների շահագործում գյուղի կողմից, որը անթույլատրելի է մեր պայմաններում:

Պետք է ասել, որ Ստրումիլինը միակը չէ, շնայած թերևս ամենահեղինակավորն է այն տնտեսագետներից, որոնք դիֆերենցիալ ունեւայի աղբյուր են համարում ոչ թե դյուղատնտեսություն, այլ նյութական արտադրության այլ ճյուղերում ստեղծվող արժեքները: Այստեղ մենք գործ ունենք վերաբաշխման կոնցեպցիայի հետ, ըստ որի հողային ունեւան ոչ թե ստեղծվում է գյուղատնտեսության մեջ, այլ պարզապես վերաբաշխվում նրա օգտին՝ նյութական արտադրության մյուս ճյուղերից:

Մեզ թվում է, որ հարցի նման մեկնաբանումը հետևանք է հողային ունեւայի վերաբերյալ Մարքսի ուսմունքի սխալ ըմբռնմանը: Հայտնի է որ հողային ունեւան Մարքսն անվանել է «կեղծ սոցիալական արժեք» և կանխատեսել, որ արտադրամիջոցների հասարակական սեփականության հաստատումից և ապրանքային հարաբերությունների վերացումից հետո կվերանա նաև հողային ունեւան, մասնավորապես դիֆերենցիալ ունեւան: Սակայն, եթե վերցնենք Մարքսի կոնցեպցիան ամբողջապես, դժվար չէ տեսնել, որ Մարքսը բնորոշում է հողային ունեւան որպես կեղծ սոցիալական արժեք՝ այնպիսի հասարակության տեսակետից, որն ազատ է հիշյալ սոցիալ-տնտեսական հարաբերություններից, այսինքն արդյունքի ապրանքա-փողային ձևից և հողի սեփականության և նրա օգտագործման բաժանվածությունից: Մինչդեռ, դժբախտաբար, մեր մի շարք տնտեսագետների համար ունեւայի հիշյալ ձևակերպումը միակն է դարձել, ստույգել է բացարձակ նշանակություն և ընկալվում է անկախ պատմա-տնտեսական կոնկրետ պայմաններից:

Մարքսի ժառանգության ստեղծագործաբար ուսումնասիրությունը կասկած չի թողնում այն բանում, որ մեր տնտեսակարգում, ապրանքային արտադրության պայմաններում, դիֆերենցիալ հողային ունեւան ամենևին էլ կեղծ սոցիալական արժեք համարել չի կարելի:

Ապրանքային տնտեսությունը նշանակում է, որ տարբերություն կա անհատական և հասարակական աշխատանքի միջև, նրանք չեն համընկնում, ուստի և առանձին մարդկանց և կուլեկտիվների աշխատանքները և նրանց տված արդյունքները չափվում են ոչ թե անմիջապես աշխատածամանակով, այլ միջանկյալ՝ արժեքային-փողային չափանիշների օգնությամբ: Լավագույն և ամենավատ հողերից ստացած արդյունքը, շնայած դրանց վրա ծախսված միևնույն աշխատանքին, իրենից տարբեր հասարակական արժեքներ է ներկայացնում: Եթե այդպես է, ուրեմն և ոչ ոք չի կարող ժխտել, որ գյուղատնտեսական արդյունքի հասարակական և անհատական արժեքի տարբերությունը միանգամայն ունի և ոչ թե կեղծ արժեք է: Միաժամանակ մեզանում առկա է հողի սեփականության և նրա տնօրինության (օգտագործման) անջատվածությունը, ուստի միատեսակ չեն հողատիրոջ և հողն օգտագործողի տնտեսական շահերը, նրանց հարաբերությունը գյուղատնտեսության հավելուրդային արդյունքի նկատմամբ: Հետևապես և այդ արդյունքի շուրջը ծավալվում են նույնպես ունի և ոչ թե կեղծ, շինծու սոցիալ-տնտեսական հարաբերություններ, որոնց հետ պետք է հաշվի նստել:

Հողային ունեւան, ինչպես և տնտեսական ամեն մի կատեգորիա, պարունակում է իր մեջ որոշակի հակասութեւններ, և երբ տնտեսագետը հայտարարում է ունեւան պարզապէս «ոչ աշխատանքային, կեղծ սոցիալական արժեք» և ուրիշ ոչինչ, նա ցանկանում է կատարել անկարելին, այն է՝ միանգամից վերանալ այդ հակասութեւնից, ունեւան շեղալ համարել, մինչդեռ նրա գոյութեան պայմանները դեռևս մնում են:

* * *

Սոցիալիզմի պայմաններում ունեւային հարաբերութեան հիմնական բոլոր հարցերը այս կամ այն չափով կապված են ունեւայի բաշխման պրոբլեմի հետ: Սովետական հայտնի ագրարային-տնտեսագետ Ի. Կոզոզովը ճշմարտացիորեն նկատում է. «Հասարակութեան և գյուղացիութեան միջև գոյութեւն ունեցող «ունեւային» հարաբերութեան կենտրոնական հարցը՝ դիֆերենցիալ հավելուրդի բաշխումն է, այն հարցը, թե տե՛ս և ինչ բաժին է լինելու «նրանից»²: Ամենից առաջ այստեղ երկու հարց է ծագում: Նախ՝ ինչո՞ւմն է պետութեան և կոլտնտեսութեւնների միջև դիֆերենցիալ ունեւայի բաշխման անհրաժեշտութեւնը, այսինքն, ունեւան ինչու պետք է բաշխվի, և ապա երկրորդ՝ ինչ համամասնութեամբ պետք է կատարվի այս բաշխումը:

Անկախ դիֆերենցիալ ունեւայի բաշխման համամասնութեւնից, պետք է ասել, որ նրա ուրե՛կ մասի լուրացումը պետութեան կողմից հանդես է գալիս իբրև հողի նկատմամբ նրա սեփականութեան իրացման տնտեսական ձևը: Մարքսի կողմից տրված ունեւայի հայտնի բնորոշումը իբրև հողի սեփականատիրական իրավունքի տնտեսական իրացում, օգնում է ճիշտ կերպով հասկանալու նաև սոցիալիստական հասարակութեւնում գոյութեւն ունեցող ունեւային հարաբերութեան էութեւնը:

Միաժամանակ պետք է ասել, որ այս բնորոշումը ընդհանուր է, այն դեռևս չի բացահայտում մեզ մոտ գոյութեւն ունեցող ունեւային հարաբերութեւնների առանձնահատկութեւնը: Ուստի, անհրաժեշտ է մի քայլ առաջ անցնել հիշյալ բանաձևից և պարզաբանել ունեւայի առանձնահատուկ բնույթը սոցիալիզմի պայմաններում: Այդ քայլը փորձում են կատարել, օրինակ «Քաղաքատնտեսութեան դասընթացի» հեղինակները: Նրանք ընդունում են, որ ունեւան մեր պայմաններում ևս հողի սեփականութեան տնտեսական իրացումն է, սակայն դրա հետ միասին, որքան էլ դա տարօրինակ է, պնդում են, թե ունեւայի վերցնելը դա հողօգտագործման վարձ չէ: «Այսպիսով, — գրում են նրանք, — հողի անվճար օգտագործման սկզբունքը և դիֆերենցիալ ունեւայի վերցնելու սկզբունքը ամենևին էլ չեն բացառում միմյանց: Նրանք տարբեր կարգի երևույթներ են»³, Շատ տարօրինակ պնդում է սա, միաժամանակ և պետք է ասել, շատ բնորոշ՝ այն իմաստով, որ տարածված է նաև մի շարք այլ հեղինակների մոտ: Ըստ որում սովորաբար դրան ավելացնում են, թե ունեւայի վերցնելը պետութեան կողմից դա ոչ թե հողօգտագործման վարձ է,

² См. И. И. Козодоев, Аграрные отношения в социалистических странах, М., 1960, стр. 178.

³ См. «Курс политической экономии», под ред. И. А. Цаголова, М., 1963, т. II, стр. 395.

այլ կոլտնտեսությունների կարելույն շափով մասնակցությունը՝ համաժողովրդական կարիքների բավարարման գործին:

Նման դատողությունները տեսական հարցերի խառնաշփոթության բնորոշ օրինակ են հանդիսանում, որտեղ տնտեսական հարաբերությունների բնութագրումը փոխարինված է դրանց պարզ նկարագրությամբ և դրվում է սուբյեկտիվիզմի խարխուլ հողի վրա: Հարցն ենք այդ հեղինակներին. իսկ մի՞թե հողօգտագործման վարձը չի հանդիսանում համաժողովրդական ֆոնդերի ստեղծման գործին կոլտնտեսությունների մասնակցության որոշակի ձևը: Մյուս կողմից, եթե կոլտնտեսությունները մասնակցում են այս համաժողովրդական ֆոնդին, ապա ո՞րն է արդյոք այս մասնակցության շափն ու ձևը որոշող տնտեսական հիմքը: Հիշյալ տնտեսագետների մոտ այդպիսի հարցադրումն անգամ բացակայում է:

Ինչպես տեսնում ենք, այդ տնտեսագետների մոտ թույլ է տրված տրնտեսագիտական իրական երևույթների տրամաբանության ոտնահարում: Եվ իսկապես, դարձյալ օրինական հարց է ծագում. եթե ռենտայի վերցնելը հողօգտագործման վարձ չէ, ապա ի՞նչ է այն: Եթե մի կողմից մենք տեսնում ենք հողատիրոջ և հողն օգտագործողի տնտեսական ուրույն հարաբերությունը, մյուս կողմից՝ ռենտայի գանձումը հողատիրոջ օգտին՝ (թե՛ մեկը և թե՛ մյուսը բնորոշում են դասընթացի հեղինակները), ապա կամա թե ակամա պետք է ռենտան դիտել որպես հողի նկատմամբ սեփականություն, սովյալ դեպքում՝ պետական սեփականության տնտեսական իրացում, այսինքն, ռենալ տնտեսական երևույթները կոչել իրենց և այն էլ շփոթնված անուններով: Հակառակ դեպքում, մեր հասարակության երկու դասակարգերի փոխհարաբերության հիմքը ստիպված կլինեինք փնտրելու ոչ թե տնտեսական, այլ, հավանորեն, սեկ ուրիշ բնագավառում:

Մեր տնտեսագիտական գրականության մեջ լայն տարածում է գտել հողի անվճար օգտագործման հասկացությունը, սակայն մեր կարծիքով, այն ճիշտ չի մեկնաբանվում: Հողը մեր երկրում ազգայնացված է, իսկ հետագայում իրոք ու անվճար տրվել է (ամրացվել է) կոլտնտեսություններին, ինչպես և այլ օգտագործողներին, այսինքն՝ նրանք ոչ մի միջոց չեն ծախսել հողը ձեռք բերելու համար (այն առք ու վաճառքի առարկա չէ այլևս): Սակայն, ինչ վերաբերվում է հողն օգտագործելուն, վերջինս ամենևին էլ անվճար չէ և լինելի կարող: Իենտու վերցնելն ինֆերստիմյան հողօգտագործման վարձ է:

Այնուհետև, հիշյալ աշխատության հեղինակները պնդում են, որ հողի և այլ արտադրամիջոցների հանրային, համաժողովրդական սեփականությունը պետությանը թույլ է տալիս կոլտնտեսություններից ամբողջապես վերցնելու դիֆերենցիալ ռենտան: Սակայն ելնելով նյութական խրախուսման նկատառումներից, այս կամ այն ճյուղի արագ զարգացման համար պետությունը կարող է կոլտնտեսություններին թողնել ռենտայի մի մասը կամ ամբողջը⁴: Այս դրույթի հետ նույնպես համաձայնել չենք կարող:

Նախ, միանգամայն սխալ է այն թեղը, որ հողի համաժողովրդական սեփականությունը սկզբունքորեն պահանջում է վերցնել կոլտնտեսություններից ամբողջ ռենտան, քանի որ համաժողովրդական սեփականությունը դա նաև կոլտնտեսային գյուղացիության սեփականությունն է, հողի և նրանից ստաց-

⁴ Նույն տեղում, էջ 399.

վող արդյունքի նկատմամբ: Չի կարելի շփոթել կամ նույնացնել հողի բուր-
ժուական և սոցիալիստական ազդայնացումը. հայտնի է, որ առաջինը ենթա-
դրում է հողի սեփականության և հողային ռենտայի փոխանցումը բուրժուա-
զիայի ամբողջական դասակարգին՝ ի դեմ նրա պետության, մինչդեռ երկրոր-
դը, այսինքն, հողի սոցիալիստական ազդայնացումը ենթադրում է որևէ ա-
ռանձին դասակարգի սեփականության մենաշնորհի ոչնչացումը հողի և հո-
դային ռենտայի նկատմամբ, դրանց փոխանցումը ամբողջ հասարակության:
Ընկրորդ, ինչպես ասացինք, հողը որպես տնտեսության օբյեկտ առհավես
հանձնած լինելով կոլտնտեսություններին, ըստ էության ստեղծում է նրանց
հողօգտագործման մենաշնորհ (մոնոպոլիա), որը և հանդիսանում է դիֆերեն-
ցիալ ռենտայի գոյության անմիջական պատճառը (դա ի դեպ ընդունում են
ևսև դասընթացի հեղինակները): Հողօգտագործման այդ յուրօրինակ մենա-
շնորհն էլ ավելի ակնառու է դարձնում այն հանգամանքը, որ հողի համաժո-
ղովրդական սեփականությունը չի կարող հիմք ծառայել ամբողջ ռենտան կոլ-
տնտեսություններին վերցնելու համար:

Եվ վերջապես, եթե ռենտան կոլտնտեսություններին թողնելը կարևոր
նշանակություն ունի նրանց նյութական խթանման տեսակետից, ապա պարզ
է, թե ինչո՞ւ այդ խթանը մի դեպքում կարելի է օգտագործել, իսկ մյուսում՝
ոչ: Մի՞թե նյութական շահագրգռվածության նկատառումները դրանք անցո-
ղիկ նկատառումներ են: Բնարկե ոչ, այս հարցին երկու պատասխան լինել չի
կարող: Դիֆերենցիալ ռենտան կոլտնտեսություններին թողնելը չի կարելի
կապել միմիայն արտադրության առանձին ճյուղերի խթանման հետ, ինչպես
դա անում են վերոհիշյալ տնտեսագետները. դա սկզբունքային համընդհանուր
նշանակություն ունի, կոլտնտեսային էկոնոմիկայի և առհասարակ ամբողջ
գյուղատնտեսության զարգացման համար:

Իհարկե, լավագույն հողամասերի օգտագործումը կոլտնտեսությունների
կողմից նրանց իրավունք չի տալիս յուրացնել ստացվող ամբողջ դիֆերենցիալ
ռենտան. դա կնշանակեր, որ կոլտնտեսությունները ոչ թե այդ հողի մենա-
շնորհ օգտագործողն ու տնօրինողն են, այլ նրա մենաշնորհ սեփականատերը:
Սակայն և չի կարելի ընկնել հակառակ ծայրահեղության մեջ, պահանջելով
որպեսզի ամբողջ ռենտան անցնի պետությանը: Դա կնշանակեր ի իր դարձ-
նել հողի սոցիալիստական ազդայնացման էությունը և անտեսել կոլտնտե-
սային հողօգտագործման նշանակությունը և իրավունքը:

Ասածից կարելի է փալ այն եզրակացության, որ սոցիալիզմի ժամանակ
տնտեսապես իրացվում է ոչ միայն հողային սեփականությունը, այլև կոլեկ-
տիվ (կոլտնտեսային) հողօգտագործման իրավունքը: Ուստի և դիֆերենցիալ
հողային ռենտան սոցիալիստական ագրարային կարգերի օրով ոչ միայն հո-
դային սեփականության տնտեսական իրացումն է, այլև կոլտնտեսային մե-
նաշնորհ հողօգտագործման անտեսական իրացումը: Դրանում է հողային
ռենտայի բնորոշ առանձնահատկությունը սոցիալիզմի պայմաններում:

Այժմ քնենք այն հարցը, թե ինչպես պետք է կատարվի դիֆերենցիալ
ռենտայի բաշխումը պետության և կոլտնտեսությունների միջև: Դիֆերենցիալ
ռենտայի ստեղծումը կապված է երկու կարգի գործողների հետ՝ բնական և
տնտեսական, մի դեպքում ռենտան ստացվում է բնական (հողա-կլիմայական
և այլ) ավելի բարենպաստ պայմանների օգտագործման շնորհիվ (դիֆերեն-
ցիալ ռենտա I), մյուսում՝ համանման պայմաններում տնտեսությունն ավելի

տան կոլտնտեսություններում մնալու դեպքում դյուդի աշխատավորների մի մասը անհավասար պայմանների մեջ է դրվում մյուս մասի նկատմամբ։ Սակայն չի կարելի աչքաթող անել, որ նման բաշխման հակասություններ կան ոչ միայն դյուդում, այլև քաղաքում, ժողովրդական տնտեսության ցանկացած ճյուղում։ Հայտնի է, որ մեզանում դեռևս ամեն ինչ չէ որ հարթ է՝ արտադրության միջոցների, այդ թվում և հողի օգտագործման նկատմամբ աշխատավորների փաստացի հավասարությունն ապահովելու, այստեղից և նրանց եկամուտների հավասարությունն ապահովելու գործում։

Բայց սա փրական կյանքի հակասությունն է, մի հակասություն, որը Յա. Վրոնսկոյի ճշմարիտ դիտողությամբ, մեր տնտեսակարգի զարգացման և առաջընթացի կարևորագույն ներքին շարժառիթներից մեկն է⁶։ Չի կարելի անտեսել այս հակասությունը կամ պահանջել նրա շուտափույթ հաղթահարումը և այն էլ սկսել կոլտնտեսություններից։

Հարցի էությունը նրանումն է, որ արժեքի օրենքի և ըստ աշխատանքի բաշխման օրենքի ամենակատարյալ գործողությունն անգամ, հակառակ որոշ տնտեսագետների կամքին, ամենևին էլ չեն պահանջում բոլոր կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների եկամուտների համահավասարեցում։ Դեռ ավելին, եկամուտների և եկամտաբերության տեսակետից կոլտնտեսությունների շերտավորման (դիֆերենցման) հնարավորությունն ու անհրաժեշտությունը թափնված է հենց արժեքի և գնի էության մեջ։ Ծիշտ է, իհարկե, որ նման շերտավորումը բացասական հետևանքների է բերում և պլանային տնտեսության մեջ դրանք պետք է նվազագույնի հասցվեն, սակայն քանի դեռ գոյություն ունի ապրանքային տնտեսությունը և նրա կատեգորիաները, շերտավորման օրինաչափությունը հնարավոր չէ իսպառ վերացնել։ Խնդիրը նրանումն է, որպեսզի օգտագործելով այս կատեգորիաները խթանել բոլոր տնտեսությունների զարգացումը։

Բացի դրանից, երբ խոսքը գնում է կոլտնտեսությունների մասին, պետք է նկատի ունենալ, որ սոցիալիզմի տնտեսական օրենքների գործողությունը կոլտնտեսային արտադրության պայմաններում ոչ թե վերացնում է վերջինիս առանձնահատկությունները, այլ ընդհակառակը, կրում է իր վրա դրանց ազդեցությունը։ Այսպես, օրինակ, չնայած դիֆերենցիալ ռենտայի, որպես տնտեսության լրացուցիչ արդյունքի, որևէ մասի բաշխումը կոլտնտեսականներին բնդհանուր առմամբ հակասում է ըստ աշխատանքի բաշխման օրենքին (քանի որ նման բաշխումը դուրս է գալիս անհրաժեշտ արդյունքի շրջանակներից), այսուհանդերձ դա բնորոշ է, համենայն դեպս չի հակասում կոլտնտեսային սեփականության բովանդակությանը, այդ սեփականության բուն փրավունքին։

Այսպիսով, տեսական ըմբռնումով դիֆերենցիալ ռենտան անհրաժեշտորեն պետք է բաշխվի պետության և կոլտնտեսությունների միջև, ընդ որում, առավել հիշտն այն է, որպեսզի ռենտայի առաջին տեսակը հիմնականում անցնի պետությանը, իսկ նրա երկրորդ տեսակը հիմնականում մնա կոլտնտեսություններին՝ որպես գյուղատնտեսության ինտենսիվացման տնտեսական խթան և անհրաժեշտ միջոց։

Սակայն դիֆերենցիալ ռենտայի բաշխման նպատակահարմարությունը և նրա կոնկրետ համամասնությունները որոշվում են ոչ միայն տեսական նկա-

6 Տե՛ս «Проблемы политической экономии социализма», М., 1961, стр. 21—22.

տառաւորներով, այլև ժողովրդական տնտեսության զարգացման այս կամ այն էտապի կոնկրետ խնդիրներով: Հայտնի է, որ սոցիալիստական շինարարության առաջին տարիներին, անցման ժամանակաշրջանի սկզբում գյուղացիության առանձին շերտերի նկատմամբ սովետական պետությունը խիստ դասակարգային քաղաքականություն էր վարում, այն հաշվով, որպեսզի արտոնյալ պայմաններ ստեղծի աշխատավոր գյուղացիության՝ շրջակների և միջակների համար, միևնույն ժամանակ սահմանափակի ունեոր գյուղացիության հնարավորությունները, վերցնելով վերջինից ամբողջ ռենտան և ոչ միայն ռենտան: Հասկանալի է, որ նույն դասակարգային սկզբունքով էր ղեկավարվում պետությունը նաև կոլտնտեսային կարգերի ստեղծման ժամանակ, աշխատելով ըստ ամենայնի նյութապես և ֆինանսապես օժանդակել գյուղի կոլեկտիվացմանը: Կոլտնտեսային կարգի հաստատումը մեր երկրում անհնարին էր առանց պետության կողմից ցույց տրվող ֆինանսական և այլ օգնության:

Այնուհանդերձ, ճշմարտությունը պահանջում է ասել, որ այդ օգնությունը միշտ չէր, որ բավարար էր: Պատմական հանգամանքների բերումով մեր երկիրը գրեթե պատմական նույն ժամանակաշրջանում ստիպված եղավ լուծելու երկու խոշորագույն խնդիրներ՝ ժողովրդական տնտեսության խնդուստրացումը և գյուղի սոցիալ-տնտեսական այնպիսի հեղաշրջումը, լինչպիսին էր համատարած կոլեկտիվացումը: Ընդ որում, քանի որ արտաքին աշխարհի օգնությունը բացառված էր, ինդուստրացումը պետք է հենվեր և հենվեց ներքին հնարավորությունների ու կուտակումների վրա: Մանրագյուղացիական երկրում կուտակումների կարևորագույն աղբյուրներից մեկը պետք է լիներ գյուղատնտեսությունը, դրա եկամուտների մի զգալի մասի վերաբաշխումը հօգուտ արդյունաբերության: Այդ վերաբաշխումը կատարվում էր գլխավորապես գների միջոցով, և դա դժվար չէ տեսնել, եթե համեմատենք գյուղատնտեսական մթերքների մթերումների և պետական մանրածախ գները: Այսպես, Ա. Մալաֆեևի գրքում բերված թվերը ցույց են տալիս, որ 1929—1952 թթ. ընթացքում մեր երկրում հացահատիկի պետական մթերման գները գրեթե չեն փոխվել (ավելացել են 19%-ով), անասնապահական մթերքների գները ավելացան 2-ից 4-անգամ: Մինչդեռ պետական մանրածախ գները, որոնցով գյուղի բնակչությունը իր անձնական սպառման համար արդյունաբերական ապրանքներ էր գնում, միայն 1940—1952 թվականների ընթացքում բարձրացան ավելի քան 10 անգամ, իսկ 1947 թվականին՝ 1928 թ. նկատմամբ, նույնիսկ 20 անգամ:

Նշված ժամանակաշրջանում այս երկու տեսակի գների միջև եղած տարբերությունը, կամ ինչպես ասում են՝ «Գների մկրատը» ավելի ու ավելի էր խզվում ի վնաս գյուղատնտեսության: Եվ դա չէր կարող բացասաբար չանդրադառնալ այս ճյուղի զարգացման վրա, որը ինչպես գիտենք, չափազանց դանդաղ էր ընթանում նշված ժամանակաշրջանում: Այսպես, եթե արդյունաբերության տարեկան արտադրանքը 1928—1952 թթ. ավելացավ 14,5 անգամ, ապա գյուղատնտեսությունն ընդամենը 14%-ով⁷:

Գյուղատնտեսության ետ մնալը, իհարկե, չի կարելի բացատրել միմիայն ցածր մթերման գներով, դրա հետ միասին իրենց քաղաքական դերն էին խա-

⁷ Տե՛ս А. М а л а ф е е в. История ценообразования в СССР. М., 1964, стр. 266—267

⁸ Տե՛ս «Народное хозяйство СССР в 1961 г.», Статистический ежегодник. М., 1962, стр. 169, 292.

դոմ և որոշ շափով դեռ այսօր էլ շարունակում են խաղալ նաև մի շարք այլ գործոններ, սակայն փների մակարդակից են կախված անմիջապես գյուղատնտեսության կուտակումները, ուստի և ընդլայնված վերարտադրության հնարավորությունները: Հիշյալ շրջանում այս հնարավորությունները չափազանց սահմանափակ են եղել:

Հայտնի է, որ վերջին 12 տարիների ընթացքում (1953—1965) կուտակ-ցության և կառավարության մի շարք միջոցառումների և հատկապես մթեր-ման փների զգալի բարձրացման ու եկամտահարկի իջեցման շնորհիվ տեղի է ունեցել երկրի ազգային եկամտի որոշակի վերաբաշխում՝ հոգուտ գյուղա-տնտեսության, ավելացել են այս ճյուղի կուտակման հնարավորությունները: Բավական է ասել, որ գյուղատնտեսական արտադրանքի մթերման փների ինդեքսը դեռևս 1960 թ. կազմեց 1952 թ. նկատմամբ 2,99, այսինքն բարձրա-ցավ շուրջ 3 անգամ, իսկ եթե նկատի ունենանք մթերման փների բարձրա-ցումը հետագա տարիներին (1962, 1963, 1965 թթ.), ապա այդ բարձրացումը կկազմի ոչ պակաս 4—5 անգամից:

1958 թ. գյուղատնտեսական մթերքների գնադոյացման պատմության մեջ առաջին անգամ հայտարարվեց, որ դները սահմանելիս պետք է հաշվի առնել յուրաքանչյուր գոտու արտադրանքի միջին ծախքերը: Դրա հիման վրա որոշ տնտեսագետներ և քաղաքատնտեսության դասընթացների հեղինակներ շտա-պեցին գալ այն եզրակացության, որ մոր փման փները արդեն ապահովում են կոլտնտեսությունների բոլոր ծախքերի հատուցումը, անհրաժեշտ եկամտա-բերությանը և պետությանն են փոխանցում, իբր, միայն դիֆերենցիալ ռեն-տան, որը գոյանում է լավագույն և միջին հողերի վրա աշխատող կոլտնտե-սություններում⁹:

Դների նման լավատեսակ «գնահատումը» սխալ է նույնիսկ այսօրվա համար, էլ չենք խոսում 1963 թ. մասին:

Ներկայումս գոյություն չունի ընդհանուր և հստակ մեթոդիկա, որով հնարավոր լիներ պարզորոշ կերպով սահմանափակել դիֆերենցիալ ռենտան գյուղատնտեսության զուտ եկամուտների ամբողջ փմարի մեջ: Սակայն տե-սական առումով հարցը պետք է որ պարզ լինի, իսկ դա թույլ կտա փնե մո-տավոր կերպով որոշել ռենտայի մեծությունը:

Վերևում արդեն հիշատակեցինք այն մասին, որ մթերման փները մինչև վերջերս սահմանված էին կոլտնտեսությունների միջին ծախքերի հիման վրա, (մի շարք մթերքների, օրինակ, անասնապահական մթերքների գծով փները չէին հատուցում նույնիսկ միջին ծախքերը): Իսկ ի՞նչ է նշանակում միջին ծախքերի սկզբունքով գնադոյացումը: Դա նշանակում է, նախ և առաջ, ար-տադրության վատագույն պայմաններում աշխատող տնտեսությունների ծախ-քերի «շրջանցում», անտեսում, որի հետևանքով այդ տնտեսությունները ոչ միայն չէին ապահովվում անհրաժեշտ եկամուտներով, այլև այստեղ առա-ջանում էին, այսպես ասած, դիֆերենցիալ վնասներ: Պետք է ասել, որ գործ-նականում այդ փները հանրորեն-անհրաժեշտ եկամուտներ չէին ապահովում նաև միջին պայմաններում աշխատող տնտեսությունների համար, քանի որ չնայած բուսաբուծության ճյուղերը եկամտաբեր էին, բայց միաժամանակ

⁹ Տե՛ս «Политическая экономия. Коммунистический способ производства», М., 1963, стр. 325.

անամնաբուծությունը գրեթե ամենուրեք վարվում էր վնասով և գա իջեցնում էր եկամտաբերության ընդհանուր մակարդակը:

Գնագոյացման այս պրակտիկայի հետևանքով կոլտնտեսություններից և առհասարակ գյուղատնտեսությունից, ընդհուպ մինչև վերջերս, վերցվում էր ոչ միայն դիֆերենցիալ ռենտա (ինչպես պնդում են վերոհիշյալ դասագրքի հեղինակները), այլև հանրորեն անհրաժեշտ, միջին զուտ եկամտի մի զգալի մասը: Դրանում կարելի է համոզվել հետևյալ մի քանի թվերով:

ՍՍՌՄ զանազան գյուղատնտեսական գոտիների կոնկրետ նյութի ուսումնասիրությունը մի շարք տնտեսագետների կողմից բերել է այն եզրակացության, որ հանրային տնտեսության նորմալ զարգացման համար պահանջվող հանրորեն-անհրաժեշտ զուտ եկամտի նորման կազմում է 50—55% (այսինքն ծախսված միջոցների յուրաքանչյուր 100 ուրբլու դիմաց պետք է ստանալ 50—55 ուրբ. զուտ եկամուտ), մինչդեռ ակադ. Ի. Լապտևի տվյալներով, 1959—1964 թթ. ընթացքում ՍՍՌՄ կոլտնտեսությունների եկամտաբերությունը տատանվել է 38—49%-ի սահմաններում, այսինքն և ոչ մի անգամ չէ հասել հանրորեն-անհրաժեշտ կամ օպտիմալ մակարդակի¹⁰:

Ինչ վերաբերվում է Հայաստանի կոլտնտեսություններին, նրանց եկամտաբերության վիճակը երևում է հետևյալ թվերից: Վերջին 5 տարիներին (1960—1964) կոլտնտեսությունները իրենց ծախսած միջոցների 100 ուրբլու դիմաց ստացել են միջին հաշվով 20,4 ուրբ. զուտ եկամուտ, իսկ 1964 թ. միայն 11 ուրբ. եկամուտ: Վիճակն ավելի վատ է լեռնային գոտիներում ու շրջաններում: Հասկանալի է, որ այսքան ցածր եկամտաբերության դեպքում դժվար է խոսել կուտակումների և արտադրության ընդլայնման հնարավորության մասին: Եթե ընդունենք օպտիմալ եկամտաբերությունը 50%-ի մակարդակով, ապա ստացվում է, որ ամբողջությամբ վերցրած հանրապետության կոլտնտեսությունները չեն ստացել անհրաժեշտ (օպտիմալ) զուտ եկամտի $\frac{3}{4}$ -ը: Երբ բացարձակ թվով կազմում է շուրջ 43 միլիոն ուրբլի (իսկ ստացել

են ընդամենը 12 միլիոն ուրբլի): Դա ըստ էության դիֆերենցիալ վնասի կամ չստացած զուտ եկամտի գումարն է:

Չնայած գյուղատնտեսության մեջ ստեղծվող ամբողջ զուտ եկամտի վերաբերյալ ուղղակի տվյալներ չեն հրապարակվում վիճակագրական օրգանների կողմից, սակայն դրանք կարելի է մոտավորապես հաշվարկել, ելնելով պետական բյուջեում կենտրոնացվող զուտ եկամուտների ընդհանուր գումարից (շրջանառության հարկ, շահույթներ և այլն) և ազգային եկամտի մեջ գյուղատնտեսության տեսակարար կշռից: Այս եղանակով կատարած Վ. Վենժերի հաշվարկները ցույց են տալիս, որ 1958 թ. երկրի կոլտնտեսային աեկտորը ստեղծել է (նույն թվականի գներով հաշվված) շուրջ 16—17 միլիարդ ուրբլու հավելյալ արդյունք, որից կոլտնտեսություններին է մնացել 5 միլիարդ ուրբլի. դա այն գումարն է, որի հաշվին կոլտնտեսությունները պետությանը վճարել են եկամտահարկը, ապահովագրական և այլ վճարներ և կատարել են ներտնտեսային կուտակումներ: Նույն հեղինակի տվյալներով, 1958—1963 թթ. երկրի կոլտնտեսությունների ու արտադրողների ստեղծած ամբողջական հավելյալ արդյունքը միջին տարեկանի հաշվով կազմել է շուրջ

¹⁰ Տե՛ս «Вопросы экономики», № 12, 1965, стр. 52.

19 միլիարդ ռուբլի, այդ թվում կուտնտեսություններին՝ ոչ պակաս 16 միլիարդ ռուբլի: Այդ նույն ժամանակ կուտնտեսություններում եկամտահարկի վճարումներից հետո մնացել է 3,7 միլիարդ ռուբլ. եկամուտ¹¹: Այստեղից երեւում է, որ գյուղատնտեսության ամբողջական հավելյալ արդյունքի վճռական մասը՝ 77% կուտակվել է պետական բյուջեում:

Եթե միաժամանակ հաշվի առնենք, որ դիֆերենցիալ ռենտան, մոտավոր հաշվումներով, կազմում է գյուղատնտեսության ամբողջական հավելյալ արդյունքի շուրջ կեսը, ապա այս բոլորից դժվար չէ կրկին գալ այն եզրակացության, որ պետական գնման գների, ինչպես և եկամտահարկի միջոցով պետությունը մինչև վերջերս վերցրել է կուտնտեսություններից ոչ միայն դիֆերենցիալ ռենտան, այլև հանրոճեն-անհրաժեշտ գուտ եկամուտների մի զգալի մասը, որն անշուշտ նորմալ երևույթ համարել չի կարելի և հակասում է ընդհանրված վերարտադրության նորմալ պահանջներին:

1965 թ. տեղի ունեցավ գյուղատնտեսական մթերքների պետական մթերման գների նոր զգալի բարձրացում (հատկապես հացահատիկային կուլտուրաների և մսի), միաժամանակ խիստ փչեցվեցին կուտնտեսություններից գանձվող եկամտահարկի չափերը և սահմանվեց հարկման նոր եղանակ, վերջապես, սահմանվեց մթերոմաների կայուն առաջադրանք՝ մի շարք տարիների համար: Միմիայն գների բարձրացման և եկամտահարկի իջեցման հաշվին երկրի կուտնտեսությունները կստանան տարեկան 3,5 միլիարդ ռուբլու լրացուցիչ եկամուտ: Սակայն որքան էլ կարևոր է այս անմիջական տնտեսական էֆեկտը, հիշյալ միջոցառումը, ինչպես և առհասարակ յուրաքանչյուր տնտեսական միջոցառում (ձեռնարկում) պետք է գնահատել այն հարստե ազդեցությամբ, որը նա կարող է թողնել արտադրության հետագա զարգացման վրա: Այս նկատառումով կոմունիստական կուսակցության և կառավարության վերոհիշյալ միջոցառումների մեջ կա մի շատ կարևոր սկզբունքային նշանակություն ունեցող մոմենտ, որը, մեր կարծիքով, պետք է ստանա իր հետագա պարզացումը և այդ սկզբունքի վրա պետք է կառուցվի առհասարակ պետության և կուտնտեսությունների տնտեսական փոխհարաբերությունների ամբողջ սխառնը: Խոսքը եկամտահարկի գանձման կարգի մասին է:

Ինչպես հայտնի է, մինչ այժմ եկամտահարկը գանձվում էր կուտնտեսությունների համախառն եկամուտներից, իսկ սկսած 1966 թ. այն գանձվելու է հիմնականում նրանց գուտ եկամտից, ավելի ճիշտ գուտ եկամտի այն մասից, որը գերազանցում է 15% եկամտաբերությանը, բացի դրանից, կուտնտեսականների վարձատրության ֆոնդի այն մասից, որը կգերազանցի մեկ կուտնտեսականի միջին ամսական 60 ռ. վարձատրության գումարը: Այսպիսով, եթե նախկինում հարկվում էին բոլոր կուտնտեսությունները անկախ նրանց շահութաբերության մակարդակից և եկամտահարկը փերցվում էր դրանց գուտ եկամտի խոշոր մասը, ապա այժմ փաստորեն հարկման ենթակա են միայն կուտնտեսությունների լրացուցիչ (հավելորդային) եկամուտները: Եկամտահարկի գումարը նվազում է 2 անգամ, իսկ ցածր շահութաբեր տնտեսությունները առհասարակ հարկ չեն վճարելու ի հարկե, չհարկվող եկամտի

¹¹ Տե՛ս «Развитие колхозной собственности в период развернутого строительства коммунизма», М., 1961, стр. 367—369; «Экономика сельского хозяйства», № 6, 1965, стр. 92—93.

նվազագույն սահմանը, ինչպես և հարկվող հավելուրդայինի սահմանը հետադաշում, հավանորեն, ավելի կճշտվի, սակայն, ինչ վերաբերվում է հավելուրդային եկամտի հարկման բուն սկզբունքին, այն ոչ միայն կմնա, այլև շորժողության ավելի մեծ ասպարեզ պետք է ստանա: Այդ սկզբունքը անհրաժեշտ է ապագայում տարածել պետության և կոլտնտեսությունների բոլոր տնտեսական հարաբերությունների վրա:

Այսօրվա վիճակով, պետության և կոլտնտեսությունների միջև գների և մթերոմենների միջոցով բաշխվում է առհասարակ կոլտնտեսային արդյունքը, եկամուտը, ընդ որում հանալս կարող է բաշխման տակ ընկնել նաև հանրոճեման հրաժեշտ գուտ եկամուտը, չնայած դա ակնհայտորեն հակասում է նորմալ վերարտադրության պահանջներին (նման բաշխումը կարելի է անվանել նաև որպես ոչ-տնտեսական, ավելի շուտ՝ վարչական բաշխում): Կոլտնտեսային էկոնոմիկայի մեր վերլուծությունը բերում է այն եզրակացության, որ պետության և կոլտնտեսությունների փոխհարաբերության հիմքում պետք է դրվի ոչ քե առհասարակ ամեն տեսակի արդյունքի կամ եկամտի բաշխումը, այլ հիմնականում՝ գյուղատնտեսության հավելուրդային գուտ եկամտի՝ դիֆերենցիալ հողային ռենտայի բաշխումը, ինչ վերաբերվում է հանրոճեման հրաժեշտ, միջին գուտ եկամտին, վերջինս բաշխվել չի կարող, եթե առաջնորդվենք տնտեսական օրենքների և ամենից առաջ ընդհանրված վերարտադրության օրենքի պահանջներով: Կոլտնտեսային արդյունքի և եկամուտների բաշխումը պետք է լինի սոցիալիստիկ, որպեսզի կոլտնտեսություններն իրենց արտադրանքը իրացնելուց հետո իրացնեն ոչ միայն միջին, հանրորեն-անհրաժեշտ գուտ եկամուտը՝ դա վերարտադրության նվազագույն պահանջն է, նրա բաղադրակ պայմանը, այլև դիֆերենցիալ հողային ռենտայի տրոշակի մասը, հատկապես այն մասը, որի ստացումը կապված է տնտեսության ջանքերից, արտադրության ինտենսիվացումից (ռենտա երկրորդ) որպես նյութական խթան և խրախուսանք գյուղատնտեսության ինտենսիվացումն արագացնելու համար:

Դա ենթադրում է նախ երկրի ազգային եկամտի ավելի ճիշտ վերաբաշխում քաղաքի և գյուղի, արդյունաբերության և գյուղատնտեսության միջև՝ հողուտ վերջինիս և երկրորդ՝ պետության նկատմամբ կոլտնտեսությունների սոցիալիստիկ կայուն առաջադրանքների սահմանում, որի դեպքում արտադրանքի ամեն մի ավելացում անմիջապես կառնդրադառնա նաև կոլտնտեսությունների հանրային եկամուտների ու նրանց անդամների անձնական վաստակի ավելացման վրա: Պետք է ասել, որ այդ գործի սկիզբը արդեն դրված է, որի կարևորագույն մոմենտներից մեկը գյուղատնտեսական արտադրանքի մթերոմենների պետական կայուն առաջադրանքի սահմանումն է 1965—1970 թթ. կտրվածքով: Մյուս մոմենտը ՍՄԿԿ XXIII համագումարի դիրեկտիվներով նախաձեռնված գյուղատնտեսության զարգացման ընդհանուր ծրագիրն է, որով, ինչպես հայտնի է, նախատեսվում է նոր հնգամյակի վերջում գյուղատնտեսական արտադրանքն ավելացնել 25%-ով: Դա ոչ միայն արտադրության գործարարական ռեսուրսի պլան է, ի տարբերություն նախորդ պլանների, այլև գյուղի աշխատավորների նյութական խթանման լավ հիմք: Արտադրության և մթերոմենների ռեսուրսի սահմանումը հնարավորություն է տալիս արտապլանային արտադրանքը ամբողջապես կամ նրա մեծ մասը թողնել տնտեսության տնօրինությանը, այնպես բաշխել և օգտագործել այդ արտապլանային արտադրանքը,

որ դա առավել շահով խթանի արտագրութեան հետագա վերելքը: Կոլտնտեսութեաններին լրացուցիչ, արտապլանային արդյունքը ե եկամուտը տնտեսապես հիմնավորված բաշխելու, նյութական շահագրգռվածութեան սկզբունքի հետևողական կիրառման դեպքում կարելի է վստահորեն սպասել, որ գյուղատնտեսութեան զարգացման առաջիկա հնգամյա պլանը ոչ միայն կկատարվի, այլ կգերակատարվի:

Н. М. МАНАСЕРЯН

О СУЩНОСТИ И РАСПРЕДЕЛЕНИИ ДИФФЕРЕНЦИАЛЬНОЙ РЕНТЫ

Р е з ю м е

Автор исходит из того, что с переходом к социализму прибавочный продукт вообще, и в частности дифференциальная земельная рента не исчезает, а принимает новую социальную форму. Необходимость использования худших земель приводит к возникновению избыточного продукта сельского хозяйства на относительно лучших участках, а в силу монополии колхозного землепользования этот продукт становится объектом особого, рентного отношения между государством и колхозами. В нашем обществе дифференциальная рента является не только экономической реализацией государственной собственности на землю, но и реализацией права колхозного землепользования. Отсюда следует объективная необходимость деления ренты между государством и колхозами.

Между тем, как показывают примерные расчеты, практика ценообразования по средним затратам, а также налогообложения по валовому доходу привели к тому, что из колхозов изымается не только рента, но и часть нормального чистого дохода, у них образуются значительные дифференциальные убытки.

В статье показывается, что рентабельность колхозов, особенно это касается колхозов Армении, значительно ниже оптимального уровня. Между тем, нормальные условия воспроизводства требуют, чтобы в колхозах оставался не только обычный, оптимальный чистый доход, но и основная часть избыточного дохода, получаемого от интенсификации хозяйства (рента II). В этом основа материального стимулирования всемерной интенсификации сельского хозяйства.